DOI: 10.61760/18290108-hra.25.2-9

ՌԴ-ՈՒՄ ԵՎ ԱՄՆ-ՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Ա. Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի պետ

Ներածություն

Ռազմական կառավարումը ցանկացած պետության պաշտպանունակության ապահովման կարևորագույն տարրն է, նրա պետական կառավարման առանձնահատուկ ոլորտը: Այն ընդգրկում է ռազմական գործունեության գործնական կողմը՝ լուծելով ռազմական շինարարության, այսինքն՝ ռազմական կազմակերպության կառուցման, կազմակերպական-կառավարչական խնդիրները, ապահովելով խաղաղ ու պատերազմական ժամանակներում պաշտպանության համակարգի գործունեությունը և վերջինս նպատակաուղղելով պետության ռազմական անվտանգության ու պաշտպանության ապահովմանը[1]: «Ռազմական կառավարումը ներառում է ԶՈՒ-ում ռեսուրսների և անձնակազմի արդյունավետ համադասումը տրված խնդրի նպատակների կատարման համար: Ռազմական կառավարման համար հարկավոր է արդյունավետորեն իրագործել ռազմական գործողությունների պլանավորումը, կազմակերպումն ու ղեկավարումը՝ միաժամանակ խթանելով հաշվետվողականությունն ու թիմային աշխատանքը»[2]:

Ռազմական կառավարումը վերաբերում է զինված ուժերի շինարարությանը, դրանց անհրաժեշտ մակարդակի ապահովմանն ու պահպանմանը, զորքերի գործողությունների կազմակերպմանը, պլանավորմանը, վերահսկմանը և համակարգմանը ռազմավարական նպատակներին հասնելու համար: Ռազմական կառավարման գործառույթների թվին են դասվում նաև պետության ռազմական կազմակերպության նախանշանակմանը համապատասխանող պատրաստման և կիրառման կազմակերպումը, ինչպես նաև զինված ուժերի, մյուս զորքերի, զինվորական կազմավորումների ու մարմինների ղեկավարումը՝ տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետության ռազմական անվտանգության ու պաշտպանության ապահովման խնդիրների լուծման և իրագործման ասպարեզում:

---

* Հոդվածն ստացվել է 14.03.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 03.07.2025:

[1] Տես *Б. С. Мусрепов.* Теория военного управления: история и современность. “Obronność. Zeszyty Naukowe”, 2015, N 1(13):

[2] Տես “Military Management” (https://runway.airforce.gov.au/topics/military-management):

Սույն հոդվածում կատարել ենք երկու առաջատար տերությունների՝ Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական կառավարման համեմատական վերլուծություն՝ փորձելով ներկայացնել, թե ինչպես են նրանք արձագանքում ռազմական բնույթի սպառնալիքներին ու մարտահրավերներին, ինչպես են մշակում իրենց ռազմական դոկտրինները և կազմակերպում ու վարում ռազմական գործողությունները: Որպես ռազմական կառավարման ուսումնասիրության օբյեկտներ դիտարկել ենք ՌԴ Գերագույն շտաբը և ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտեն:

ՌԴ Գերագույն շտաբը

ՌԴ ԶՈՒ-ի Գերագույն շտաբը (ԳՇ) Ռուսաստանի պաշտպանության նախարարության տրամադրած լիազորությունների շրջանակներում կատարում է Զինված ուժերի նկատմամբ վերահսկողություն, կազմակերպում է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության պլանավորումը, զորահավաքի նախապատրաստումը և զորահավաքը, ինչպես նաև համակարգում է պաշտպանության ոլորտում մյուս զորքերի, ռազմական և հատուկ կազմավորումների գործունեությունը[3]:

Ռազմական որոշումների կայացման ռուսական մոդելով ավանդաբար զգալի անձնական պատասխանատվություն է դրվում հրամանատարների վրա, հետևաբար՝ ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետն անձնական պատասխանատվություն է կրում ԳՇ-ին առաջադրված խնդիրների հաջող կատարման համար[4]: ՌԴ ԳՇ պետին նշանակում է Ռուսաստանի Դաշնության Նախագահը: Հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարն ունի որոշակի դեր կոնկրետ բարձրաստիճան սպային տվյալ պաշտոնին նշանակելու գործում, մինչդեռ Պետդուման գործնականում չունի իրավասություն նշանակելու կամ վերահսկելու նրան: Չկա նաև ժամկետային սահմանափակում. ԳՇ պետը ծառայում է Նախագահի հայեցողությամբ: Նշանակման այս գործընթացը խիստ անհատականացված համակարգի վկայությունն է: Ավելին. այս պաշտոնում անձանց նշանակելու լիազորությունը կարող է ծառայել որպես այն մի քանի սահմանակարգային մեխանիզմներից մեկը, որոնց միջոցով ՌԴ Նախագահը կարող է ազդել բարձր մակարդակի ռազմական որոշումների կայացման վրա:

Որպես Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ՝ ԳՇ պետը վերահսկում է նաև ՊՆ որոշ վարչություններ և ԶՈՒ-ի տեսակների գլխավոր հրամանատարությունների, զորատեսակների հրամանատարությունների և զինվորական օկրուգների հրամանատարությունների գործունեությունը: ԳՇ

[3] Տես «Указ Президента РФ от 22.04.2020 № 283 "О внесении изменений в Положение о Генеральном штабе Вооруженных Сил Российской Федерации, утвержденное Указом Президента Российской Федерации от 23 июля 2013 г. № 631"» (https://normativ.kontur.ru/document?moduleId=1100&documentId=6968):

[4] Տես *М. А. Гареев.* Роль штабов в системе военного управления. «Вестник Академии военных наук», 2003, № 1; նաև՝ «Указ Президента РФ от 22.04.2020, № 283», п. 26:

պետը պատասխանատու է Գերագույն շտաբի և դրան ենթակա՝ ռազմական կառավարման մարմինների կանոնակարգերի մշակման համար, ինչպես նաև հաստատում է ռազմական կառավարման մարմինների, միավորումների, զորամասերի ու կազմակերպությունների կառուցվածքը և հաստիքային համալրման ժամանակացույցը[5]:

ԳՇ պետը պատասխանատու է նաև սպառազինության և ռազմական տեխնիկայի առնչությամբ միասնական ռազմատեխնիկական քաղաքականության մշակման ու վարման համար: Առաջնորդվելով ԶՈՒ-ի շահերով՝ նա կազմակերպում է գիտական հետազոտություններ, ղեկավարում է Զինված ուժերի ռազմագիտական համալիրը և վերահսկում օտարերկրյա պետությունների հետ ռազմական բնույթի համագործակցությունը[6]: ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետի պարտականությունների ու լիազորությունների հաշվառմամբ՝ այդ պաշտոնին առաջադրվելու համար կան մի քանի նախապայմաններ: Այսպես. ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետը՝

- սովորաբար լինում է ցամաքային զորքերի բարձրաստիճան սպա, ինչը վկայում է խորհրդային և ռուսական ռազմական մտածողության մեջ և ավանդույթներում ցամաքային զորքերի դերի և նշանակության առաջնայնությունը. ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարությունը զորքերի կառավարման օպերատիվ իշխանությունը պահպանում է հնարավորինս երկար և Ռուսաստանի ընդհանուր նախանշանակման ուժերի միջուկն է,
- որպես կանոն, ունի նշանակալից ռազմական գործողություններին մասնակցության փորձ, ինչն ընկալվում է որպես կառավարման հմտությունների գործնական ապահովման երաշխիք,
- սովորաբար ունի զինվորական օկրուգ ղեկավարելու փորձ:

ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտե

ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտեն (ՇՊՄԿ, *Joint Chiefs of Staff)* ձևավորվել է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Այն 1942 թ. ստեղծել է Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը՝ առանց որևէ պաշտոնական կանոնադրության և դերերի ու պարտականությունների հստակ սահմանման: Երբ Փեռլ Հարբորի վրա ճապոնացիների հարձակումը ԱՄՆ-ին կանգնեցրեց պատերազմի առաջ, ամերիկյան զինվորականները լայնածավալ ռազմարշավները համակարգելու միջոցներ չունեին, և Ռուզվելտը միտք հղացավ այդ բացը լրացնելու **ՇՊՄԿ-ի** միջոցով[7]:

1947 թ. ընդունված Ազգային անվտանգության մասին օրենքով կազմավորվեց նաև Շտաբների պետերի միացյալ կոմիտեի ենթակայությամբ գոր-

[5] Տես «Указ Президента РФ от 22.04.2020 № 283»:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես *Steven L. Rearden.* Council of War: A History of the Joint Chiefs of Staff, 1942–1991. Washington, D.C., 2012, Chap. 1. “The War in Europe”, PP. 1–3 (https://www.jcs.mil/Portals/36/Documents/History/Institutional/Council_of_War.pdf):

ծող Միացյալ շտաբը (ՄՇ, *Joint Staff)*[8]*:* Վերջինս ձևավորվեց որպես մշտական կազմակերպություն՝ սահմանված դերերով և պարտականություններով: ՄՇ տնօրենին *(Director of the Joint Staff)* նշանակում է ՇՊՄԿ նախագահը *(Chairman of the Joint Chiefs of Staff),* որը նաև որոշում է Միացյալ շտաբի պարտականությունները: Կանոնադրությամբ ամրագրված է, որ ՄՇ գործառույթը մարտական ուժերի միացյալ ռազմավարական ղեկավարման, միացյալ հրամանատարությամբ նրանց գործելու և որպես ցամաքային, ռազմածովային ու ռազմաօդային ուժերի արդյունավետ խմբավորում մարտական գործողություններ վարելու հարցերում ՇՊՄԿ նախագահին՝ իր պարտականությունների կատարման համար օժանդակությունն է[9]:

Ներկայումս Շտաբների պետերի միացյալ կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից, Բանակի շտաբի պետից, Ռազմածովային ուժերի շտաբի պետից, Ռազմաօդային ուժերի շտաբի պետից, Ծովային հետևակի հրամանատարից, Ազգային գվարդիայի հրամանատարից, ինչպես նաև Տիեզերական ուժերի շտաբի պետից[10]:

1947 թ. Ազգային անվտանգության մասին օրենքով սահմանվում էին նաև ՇՊՄԿ նախագահի դերն ու պարտականությունները, որոնցից գլխավորն էր ԱՄՆ-ի Նախագահին ռազմական ռազմավարական խորհրդատվության տրամադրումը: ԱՄՆ-ի օրենսգրքի 10-րդ բաժնում սահմանվում են այս խորհրդատվական դերի կանոնադրական հիմքը և տվյալ պաշտոնում Նախագահի առաջադրած անձի նշանակման կարգը: Թեև պաշտոնավարումը կարող է երկարաձգվել, այդուհանդերձ ի սկզբանե սահմանվել է 4 տարի ժամկետ, իսկ ընտրությունն առ այսօր հաստատում է Սենատը[11]:

Ներկայումս նա ԱՄՆ-ի Նախագահի, Պաշտպանության քարտուղարի և Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) ղեկավարի ռազմական հարցերով գլխավոր խորհրդականն է: ՇՊՄԿ բոլոր անդամները օրենքով ռազմական խորհրդականներ են և կարող են հարցման դեպքում կամ իրենց կամքով ՇՊՄԿ նախագահի միջոցով կարծիք հայտնել կամ խորհուրդ տալ Նախագահին, Պաշտպանության քարտուղարին կամ ԱԱԽ-ին[12]:

Որպես համեմատություն նշենք, որ ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետը ևս կատարում է այս բոլոր պարտականությունները, բայց ունի գործելու շատ ավելի մեծ ազատություն և ընդգրկույթ. նա մշակում է ռազմավարություն և դոկտրին, գնահատում է ԶՈՒ-ի պատրաստությունն ու մշակում դրա կառուցվածքին առնչվող պահանջները և ըստ դրանց՝ անհրաժեշտ բյուջեն:

[8] Տես “National Security Act of 1947”. Approved July 26, 1947 (https://www.govinfo.gov/content/pkg/COMPS-1493/pdf/COMPS-1493.pdf):

[9] Տես “The Joint Chiefs of Staff Celebrates 72 Years Today”. Joint Chiefs of Staff (https://www.jcs.mil/Media/News/News-Display/Article/1911127/the-joint-chiefs-of-staff-celebrates-72-years-today/):

[10] Տես նույն տեղում:

[11] Տես “U.S. Code, Title 10, Armed Forces”, § 151-152 (https://www.govinfo.gov/content/pkg/USCODE-2010-title10/html/USCODE-2010-title10.htm):

[12] Տես “The Joint Chiefs of Staff Celebrates 72 Years Today”:

ԱՄՆ-ի ՇՊՄԿ նախագահի և ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետի պարտականությունների համեմատությունից պարզ է դառնում, որ նմանությունները ռազմավարական պլանավորման և դոկտրինի մշակման ոլորտներում են: Այսպես. ԱՄՆ-ի Ազգային ռազմական ռազմավարությունն իր բովանդակությամբ զուգահեռներ ունի ՌԴ ԳՇ պետի/պաշտպանության նախարարության մշակած «Պաշտպանության պլանի» հետ[13]: Այսպիսով՝ երկու ղեկավարներն էլ նշանակալի դեր ունեն զինված ուժերի զարգացման և գործունեության պլանների մշակման գործում: ՇՊՄԿ նախագահը պատասխանատու է միայն միացյալ ուժերի (ոչ թե առանձին ծառայությունների) դոկտրինի ստեղծման համար, մինչդեռ ԳՇ պետը պատասխանատու է ամբողջ ԶՈՒ-ի զարգացման հայեցակարգի տեսակների մշակման համար[14]:

2016 թ. ՇՊՄԿ նախագահ գեներալ Զոզեֆ Դանֆորդը հանդես եկավ ՇՊՄԿ նախագահի լիազորությունների շրջանն ընդլայնելու առաջարկությամբ[15]: Մասնավորապես՝ ՇՊՄԿ նախագահը կկարողանար ուժերի համընդհանուր բաշխման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել ԱՄՆ-ի Նախագահին և Պաշտպանության քարտուղարին:

Այս պարտականությունները նման են ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետի պարտականություններին: Այսպես. ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետը պատասխանատու է պատերազմի ժամանակ հինգ զինվորական օկրուգների կամ Միացյալ ռազմավարական հրամանատարությունների գործողությունների համադասման համար, և նրան վերապահված են հրամանատարական լիազորություններ՝ ցանկալի արդյունքին հասնելու համար: Մինչդեռ ՇՊՄԿ նախագահը չունի որևէ գործառական լիազորություն. նրա լիազորությունները սահմանափակվում են խորհրդատվություններով:

1986 թ. Գոլդուոտեր–Նիկոլզի օրենքի համաձայն՝ ՇՊՄԿ-ն հանվեց Նախագահի և ծառայությունների միջև հրամանատարական շղթայից, որն «սկսվում է Նախագահից մինչև Պաշտպանության քարտուղար և Պաշտպանության քարտուղարից անցնում է մարտական հրամանատարության հրամանատարին *(commander of the combatant command)*»[16]:

Մարտական հրամանատարությանը *(combatant command, CCMD)* վերապահվեց օպերացիաների պլանավորման և կատարման պատասխանատվությունը, մինչդեռ ծառայությունները պետք է կենտրոնանային բացառապես կազմակերպական, ուսումնավարժական և հանդերձավորման ու սպառազինման խնդիրների վրա[17]:

---

[13] Տես «Указ Президента РФ от 13.11.2020 № 704 (ред. от 15.05.2025) "О введении в действие Плана обороны Российской Федерации на 2021–2027 годы"» (https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_367747/):

[14] Տես նույն տեղում:

[15] Տես “U.S. Code, Title 10, Armed Forces”, § 153:

[16] Տես “Goldwater–Nichols Department of Defense Reorganization Act of 1986”. Public Law 99–433, 1 October 1986, Chap. 5. “Joint Chiefs of Staff”, § 155. “Joint Staff” (https://history.defense.gov/portals/70/documents/dod_reforms/goldwater-nicholsdodreordact1986.pdf):

[17] Տես *S. Rebecca Zimmerman, Kimberly Jackson, Natasha Lander, Colin Roberts, Dan*

ԱՄՆ-ի մարտական հրամանատարությունների կարիքների վերաբերյալ ՇՊՄԿ նախագահի տարեկան զեկույցը ներառում է տարածքային մարտական հրամանատարությանը ներկայացվող «գերակա պահանջմունքների համապարփակ ցանկը»[18]: Այս զեկույցով նա Կոնգրեսին առաջարկում է տրամադրել փորձագիտական խորհրդատվություն՝ նկարագրելով «Նախագահի բյուջեում առաջարկվող ֆինանսավորումը»[19]: ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պարագայում դրա պետի պարտականությունների շրջանն ավելի լայն է՝ պայմանավորված ՌԴ ամբողջ բանակի համար անհրաժեշտ գնումների և սպառազինությունների պետական ծրագրի մշակման հարցերով: Ի տարբերություն ԳՇ-ից՝ ՇՊՄԿ-ում նշանակված անձնակազմը չի կորցնում իր ծառայողական պատկանելությունը, և նման նշանակումը կրում է շրջափոխական (ռոտացիոն) բնույթ: Որպես հակադրություն՝ ԳՇ-ում նշանակումները լինում են մշտական պաշտոնի, և այդ սպաներն իրենց տարբերանշանները փոխարինում են ԳՇ տարբերանշանով ու ծառայում այդ մարմնում իրենց կարիերայի մնացած ժամանակահատվածում[20]: ԱՄՆ-ի մոդելում համատեղ դերում ծառայելը, այս հեռանկարը զարգացնելը և ներծառայողական հարաբերությունների զարգացումը միտված են զինծառայողներին օգնելու հաղթահարել կարծրացած ծառայողական ավանդույթները և մեծացնելու համատեղ կարողությունները: ԳՇ-ի համար սպաների մշտական վերանշանակման և ծառայողական պատկանելության դերի նվազեցման լրացուցիչ քայլերը նույնպես ծառայողական ավանդականության հաղթահարման մեխանիզմ են, թեև ավելի ուժեղ շեշտադրմամբ:

Այս երկու կազմակերպությունների անձնակազմերի թվաքանակները նույնպես զգալիորեն տարբերվում են: ԱՄՆ-ի ՄՇ-ն սահմանափակված է 1500 զինծառայողով, իսկ ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ միայն Գլխավոր օպերատիվ վարչության անձնակազմը բաղկացած է ավելի քան 1500 հոգուց[21]: ԳՇ-ում ծառայելը համարվում է պատվաբեր. այդ սպաները ներկայացնում են իրենց ոլորտի վերնախավը, հատկապես՝ Գլխավոր օպերատիվ վարչության դեպքում: Տվյալ պաշտոնների համար ընտրվում են միայն մեծ կարողություններով օժտված սպաներ, և նման սպաների հաճախ հայտնաբերում և ընտրում են նրանց ծառայության վաղ փուլերում:

Madden, Rebeca Orrie. Movement and Maneuver: Culture and the Competition for Influence Among the U.S. Military Services. “RAND” Corporation, 2019, PP. 162–163 (https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR2200/RR2270/RAND_RR2270.pdf):

[18] Տես “U.S. Code, Title 10, Armed Forces”, § 153:

[19] Տես նույն տեղում:

[20] Տես *Lester W. Grau, Charles K. Bartles.* The Russian Way of War: Force Structure, Tactics, and Modernization of the Russian Ground Forces. Foreign Military Studies Office, 2016, PP. 11–12 (https://www.armyupress.army.mil/portals/7/hot%20spots/documents/russia/2017-07-the-russian-way-of-war-grau-bartles.pdf):

[21] Տես “U.S. Code, Title 10, Armed Forces”, § 155:

Կազմակերպական կառուցվածքների և պարտականությունների համեմատական վերլուծություն

ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտեին կից գործող օժանդակ մարմինը՝ Միացյալ շտաբը, բաղկացած է ութ վարչություններից, որոնք ընդգրկում են ռազմական պլանավորման և օպերացիաների բոլոր կողմերը: Այս վարչությունները սովորաբար ղեկավարում են երեքաստղանի գեներալներ կամ ծովակալներ, թեև կարող են լինել բացառություններ:

Հարկ է նշել, որ այդ երկու կազմակերպությունների կառուցվածքներն ուսումնասիրելիս տպավորություն է ստեղծվում, թե դրանք ունեն նույնատիպ պարտականություններ, սակայն նման դեպքում կանտեսվեն կարևոր նրբություններ՝ լիազորությունների առումով: ԳՇ-ի համեմատությամբ ՇՊՄԿ կանոնադրական գործառույթների սահմանափակության պարագայում ՄՇ վարչություններն արտացոլում են ծառայությունների գործառույթները, ինչով էլ նման են ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ-ին[22]: Տվյալ կազմակերպվածքն ընդունվել է ուժերի միջև միջտեսակային հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով: Շտաբի հաստիքները կազմակերպվել են այնպես, որ լինի բոլոր զորատեսակների վարչությունների և դերերի վերաբերյալ ընդհանուր իմացություն: Այսպես. 4 թիվը՝ որպես թիկունքային ապահովման ծառայության կադրային համարանիշ, կիրառվում է Բանակում, ռազմաօդային ուժերում, նավատորմում և միացյալ մարմնում կամ կազմակերպությունում:

ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ որոշ հաստիքներ նման են ԱՄՆ-ի տարածքային մարտական հրամանատարության հաստիքներին, բայց ոչ թե կոնկրետ ռազմական գործողությունների թատերաբեմի, այլ մի ամբողջ ռազմական օպերացիայի համար: Օրինակ՝ ԱՄՆ-ի ԶՈՒ-ի Եվրոպական հրամանատարությունը *(EUCOM)* ունի օպերատիվ պլաններ մշակելու, զորավարժությունների ժամանակացույցներ սահմանելու և տարածքային մարտական հրամանատարության համար ուժերի պլանավորման խնդիրներ դնելու ինքնավարություն: Նույն պարտականությունները կատարում է ՌԴ ԶՈՒ-ի Գերագույն շտաբը: Այսինքն՝ ՌԴ Արևմտյան զինվորական օկրուգի հրամանատարը՝ որպես առանձին տարածաշրջանի ԶՈՒ-ի հրամանատար, չունի ռազմավարություն մշակելու, պլանավորելու և իրագործելու այն նույն պատասխանատվությունը, ինչ ԱՄՆ-ի ԶՈՒ-ի Եվրոպական հրամանատարության հրամանատարը:

Հրամանատարական շղթան

Երկու կազմակերպական կառուցվածքների մտահղացումն էլ այնպիսին է, որ խաղաղ ժամանակից պատերազմական ժամանակաշրջանի անցնելու համար պահանջվում են նվազագույն փոփոխություններ[23]: Ուշադրության է

[22] Տես նույն տեղում:

[23] Տես *В. В. Герасимов.* Опыт стратегического руководства в Великой Отечественной войне и организация единого управления обороной страны в современных условиях. «Вестник Академии военных наук», 2015, № 2:

արժանի այն հանգամանքը, որ ՌԴ կազմակերպական կառուցվածքի շրջանում գործադիր իշխանության բազմաթիվ տարրեր ենթարկվում են ԶՈՒ-ի ԳՇ-ին՝ բոլոր դաշնային գործադիր մարմինների գործունեությունը համակարգելու համար[24]: Քանի որ ԱՄՆ-ի պարագայում նման պահանջ չկա, ապա ԱՄՆ-ի հրամանատարական շղթայում չկան դաշնային գործադիր իշխանության լրացուցիչ տարրերը[25]:

Տարբեր լիազորություններ, տարբեր կարողություններ

ՌԴ ԶՈՒ-ի Գերագույն շտաբը և ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտեն ունեն զգալիորեն տարբեր իրավասություններ. թեև նրանց կազմակերպական կառուցվածքները ինչ-որ առումով նման են, այդուհանդերձ, ակնհայտ է, որ այս երկու կազմակերպությունները պարզապես նման են տեսակով կամ անվամբ, այսինքն՝ նրանք երկուսն էլ զինվորական շտաբներ են: ԳՇ-ն չի մրցակցում ՌԴ ՊՆ-ում հեղինակության համար ռազմական ուղղվածության այլ կազմակերպությունների հետ: Նա վերադաս է ծառայությունների և հրամանատարական շղթայում զինվորական օկրուգների հրամանատարությունների նկատմամբ: ԱՄՆ-ի դեպքում ՄՇ-ն լավագույն դեպքում իր կարևորությամբ հավասարազոր է ծառայությունների ղեկավար մարմիններին և տարածքային մարտական հրամանատարությանը:

Ի թիվս այլ հիմնավորումների՝ երկու մարմինների լիազորությունների տարբերությունները կարող են բացատրվել պատմական փորձով և պետությանն սպառնացող վտանգների ընկալմամբ: Ռուսաստանի ռազմական պատմությունը, նրա անծայրածիր տարածքը վկայում են, որ ռուս զինվորականները միտված են հայրենիքի պաշտպանությունը իրագործելու ցամաքային ուժերով: Քանի որ ռազմական վտանգն անմիջականորեն սպառնում է պետության հսկայական տարածքին՝ անծայրածիր սահմանների ցանկացած հատվածից, ապա պահանջվում է զորքերի կառավարման այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն կտա արագ կերպով որոշումներ կայացնելու և պետության ցանկացած շրջանում գործադրելու մեծ պաշտպանական ջանքեր: Այս համատեքստում տրամաբանական է պետության պաշտպանության համակարգման և կառավարման միասնական կենտրոնացված մարմնի օժտումը ղեկավար լիազորություններով: ԱՄՆ-ը շեշտը ավելի քիչ է դնում իր տարածքի պաշտպանության վրա՝ պատմականորեն օգուտ քաղելով իր անմիջական հարևանների հետ խաղաղ հարաբերություններից: Փոխարենը՝ Միացյալ Նահանգների Զինված ուժերը կենտրոնացած են հսկայական տարածությունների վրա իրենց պետության հզոր ազդեցության տարածման և դաշնակիցների հետ համատեղ գործողությունների վարման վրա: Ըստ այդմ՝ լիազորությունները պետք է փոխանցվեն օպերացիաների համապատասխան թատերաբեմում գործող աշխարհագրական տարածքի մարտական հրամանատարությունների հրամանատարներին, որոնք տեղյակ են իրադրությունից

[24] Տես «Указ Президента РФ от 13.11.2020 № 704» (ред. от 15.05.2025):

[25] Տես “U.S. Code, Title 10, Armed Forces”, § 152, 155:

և լավագույնս կարող են տվյալ թատերաբեմում համակարգել և կառավարել ռեսուրսները:

Ամփոփելով՝ ներկայացնենք հետևյալ դիտարկումները.

1. ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ-ն օժտված է բարձր աստիճանի կենտրոնացված կառավարման կարողությամբ: Պարտականություններն ու իրավասություններն այնքան լայն են, որ թվում է, թե ՌԴ-ում Միավորված ռազմավարական հրամանատարության միջոցով մեկ կազմակերպություն կատարում է ԶՈՒ-ի կառավարում, ռազմավարության մշակում, պլանավորում և ուժերին ներկայացվող պահանջների ձևակերպում, ուժերի կառուցվածքի, ռեսուրսների գերակայությունների որոշում:

Այս մոդելով ապահովվում է որոշումների կայացման ավելի արագ ընթացքը այնքանով, որքանով որ ԳՇ-ն ստիպված չէ համակարգելու մի քանի շահագրգիռ կողմերի գործողությունները: Ռուսաստանյան մոդելում որոշումների կայացումը կատարվում է «վեր ի վայր»: Դրանով սահմանվում են ռազմական առաջնահերթությունները և վերահսկվում է դրանց կատարումը՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահի հանձնարարականների հիմքով: Այդուհանդերձ, եթե վերադաս հրամանատարները (սպաները) վերևից ուղղորդում չեն ստանում կամ վախենում են սխալ որոշում կայացնելուց, որոշումների կայացման գործընթացը կարող է նկատելիորեն դանդաղել:

ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ կենտրոնացված կառավարման մոդելը, կարծում ենք, ամերիկյան մոդելի նկատմամբ ունի առավելություններ ռազմավարական և ուժերի պլանավորման, ռազմական դոկտրինի մշակման, կարողությունների վերաբերյալ պահանջների, գնումների և այլ գործառույթների առումով, երբ վտանգն սպառնում է անմիջականորեն պետությանը:

ԱՄՆ-ի Շտաբների պետերի միացյալ կոմիտեի պարագայում այս պարտականությունները բաշխված են Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի, Պաշտպանության քարտուղարի գրասենյակի, աշխարհագրական տարածքների մարտական հրամանատարությունների միջև: Այս դինամիկան արտացոլում է զսպանակների ու հակակշիռների համակարգը, որը ԱՄՆ-ի կառավարության և ռազմական հզորության կարևոր բաղադրիչն է: Այդուհանդերձ, հիմնական խնդիրները դիտարկող սուբյեկտների (կատարողների, անձանց) համակարգի դեպքում կարող են դանդաղել որոշումների կայացումը, պլանավորումը և իրականացումը:

Հարկ է հաշվի առնել, որ ռուսաստանյան մոդելում կարևորվում է կենտրոնացվածության և մասնագիտացվածության փոխկապվածությունը: Նախ. այդ մոդելը մեծապես հենվում է հրամանատարի ձեռնհասության *(компетентность; competence)* վրա բոլոր մակարդակներում՝ ռազմավարականից մինչև մարտավարական[26]: Ռազմավարական մակարդակում ռուսաս-

[26] Տես *Roger N. McDermott, Charles K. Bartles.* The Russian Military Decision-Making Process and Automated Command and Control. Hamburg, 2020, PP. 29–33 (https://www.researchgate.net/publication/345212545_The_Russian_Military_Decision-Making_Process_Automated_Command_and_Control):

տանյան զինուժը մեծապես ապավինում է ապագա պատերազմը ճշգրիտ կանխատեսելու և համապատասխան ուժային կառուցվածք մշակելու ԳՇ կարողության վրա, ըստ որի՝ նման սպառնալիքի դիմակայելու համար մշակվում է օպերատիվ հայեցակարգ: Մարտավարական մակարդակում ռուսաստանցի զինվորականները մեծապես հենվում են իրավիճակը ճիշտ գնահատելու, գործողությունների ուղի ընտրելու և հրամաններ տալու հրամանատարի կարողության վրա[27]: Սակայն՝ ռուսաստանյան մոդելով հատկապես կրտսեր հրամանատարական կազմը վատ պատկերացում ունի «օպերացիայի որոշման» մասին *(решение на операцию; commander's intent)*՝ հիմնականում առաջնորդվելով ոչ թե անձնական ստեղծարարությամբ, այլ վերադասի ցուցումներով[28]: Ըստ այդմ՝ տեղեկույթի ոչ ամբողջական, պակաս լինելու կամ ընդհանրապես չլինելու պայմաններում որոշումների կայացման գործընթացը կամ օպերացիաների իրագործումը կարող է կաթվածահար լինել: Սրան հակադրվում է ԱՄՆ-ի մոդելը, ըստ որի՝ պլանավորման գործում հրամանատարից ստացված հրահանգները, «օպերացիայի որոշումը» ավելի հանգամանորեն պարզորոշելու համար ներգրավված է բազմաթիվ վարչություններից ձևավորված անձնակազմ[29]:

Ռուսաստանյան մոդելում «վարից վեր» արձագանքումները համեմատաբար ավելի սահմանափակ են: ԶՈՒ-ի ստորաբաժանումները ներառված են ռազմական գործողությունների թատերաբեմերում, սակայն հայտնի չէ, թե արդյոք նրանք հետադարձ կապով վերադասին տեղեկություններ են տրամադրում, թե՞ մարտավարական փոփոխություններ են կատարում հրամաններում ռեալ ժամանակում՝ օգտագործելով իրադրության տվյալները:

Սա մասամբ պայմանավորված է այն բանով, որ հրամանատարական լիազորությունների կենտրոնացվածությունը և բարձր աստիճանի մասնագիտացումը ճնշում են ստեղծարարությունն ու ճկունությունը, հատկապես՝ ստորին մակարդակներում: Ի տարբերություն ամերիկյան մոդելից՝ ՌԴ ԶՈՒ-ի ստորին մակարդակի ենթակաները չունեն շատ գիտելիքներ, պատրաստվածություն և հրամաններն իրավիճակին հարմարեցնելու իրավասություն, եթե իրադրությունը չի համապատասխանում հրամանատարի նախօրոք կատարած գնահատումներին կամ օպերացիայի պլանին: Ավելին. հրամանատարն անձնական պատասխանատվություն է կրում իր ենթակաների գործողությունների համար: Ըստ այդմ՝ հրամանատարները նախաձեռնողականության համար քիչ դրդապատճառներ ունեն[30]:

2. ՌԴ ԳՇ սպաներն ունեն բարձր աստիճանի մասնագիտական փորձ (օպերատիվ և մարտավարական օղակներում մարտական գործողությունների մասնակցությամբ պայմանավորված): Նրանց մոդելում շեշտը դրվում է մասնագիտացման վրա, քանի որ այդ դեպքում ապահովվում է այն սպա-

[27] Տես նույն տեղում, էջ 29:

[28] Տես նույն տեղում, էջ 28:

[29] Տես նույն տեղում էջ 32:

[30] Տես նույն տեղում, էջ 28:

ների անընդհատ մասնագիտական զարգացումը, որոնք ներգրավված են կոնկրետ ռազմական ճյուղում որևէ մակարդակում՝ օպերատիվ կամ մարտավարական, կոնկրետ խնդիրներ կատարելու գործում:

Թեև մասնագիտական փորձի շնորհիվ հնարավոր է տվյալ մակարդակի որոշակի խնդիրների վերաբերյալ ավելի խոր պատկերացում կազմել, սակայն համակողմանի պատրաստում չանցած սպաներ ունենալը նշանակում է, որ տվյալ ոլորտում սպայական մակարդակի փորձի և գիտելիքների պակասը չի կարող հեշտությամբ լրացվել: Ըստ այդմ՝ համակարգն էապես ավելի հակված է դեպի միկրոկառավարում: Օրինակ՝ Մոսկվայում տեղակայված ԳՇ սպաները կարծես թե անվստահություն ունեն գծային ստորաբաժանումների սպաների նկատմամբ և փորձում են Մոսկվայից միկրոկառավարում իրագործել մարտավարական որոշումներ կայացնելիս: Դա դրսևորվեց Չեչնիայում և Վրաստանում, երբ ցամաքային և օդային օպերացիաներն անցկացվեցին Մոսկվայից առանձին և պատճառ դարձան ձախողումների[31]:

Սրանից զատ՝ միայն մեկ տեսակի ծառայությունում արհեստավարժ լինելը կարող է խնդիրներ առաջացնել ՌԴ Զինված ուժերի տարբեր տեսակների ու զորատեսակների փոխգործելիության առումով:

3. Զինվորական սահմանափակումները ազդում են ԱՄՆ-ի և Ռուսաստանի բանակներում որոշումների կայացման վրա (թեև տարբեր ձևերով): ՌԴ մոդելը կառուցված է ծառայությունների սահմանափակումների հավանականությունն ու ազդեցությունը մեղմելու համար[32]: Թերևս աքսիոմ է, որ կազմակերպությունները հետապնդում են իրենց մեկուսախմբային շահերը՝ ի հաշիվ ավելի լայն շահերի:

Ամերիկյան մոդելը, ըստ մտահղացման, խրախուսում է մրցակցությունը ծառայությունների և ՌԳԹ տարբեր հրամանատարությունների միջև: Թեև դրա նպատակն է խրախուսել ստեղծարարությունը, նորամուծականությունը և արդյունավետությունը, այն նաև ստեղծում է բյուրոկրատական մրցակցություն, քանի որ բոլորը մրցակցում են սահմանափակ ռեսուրսների համար[33]: Մինչդեռ ռուսաստանյան մոդելում ԳՇ գերիշխող դերը մեղմացնում է այս մրցակցությունը (գոնե որոշ չափով):

Թեև ԳՇ-ում իշխանության կենտրոնացումը ստեղծում է հզոր դատավորի, որն իրավասու է լուծելու ծառայությունների և ՌԳԹ հրամանատարների միջև նեղ շահերից բխող վեճերը, այս մոդելով բարձր մակարդակներում առաջ են քաշվում միայն նեղ տեսակետներ, մասնավորապես՝ ԳՇ նեղ շահերը ներկայացնող[34]: ՌԴ ԳՇ-ում գերակշռում են ցամաքային զորքերի սպա-

[31] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *М. С. Барабанов, А. В. Лавров, В. А. Целуйко.* Танки августа. Сборник статей. М., 2009:

[32] Տես *Լեստեր Ռ. Գրաու, Չառլզ Ք. Բարտլես,* Նշ. աշխ., էջ 12:

[33] Տես *Greg Whisler.* Strategic Command and Control in the Russian Armed Forces: Untangling the General Staff, Military Districts, and Service Main Commands (Part Two). “The Journal of Slavic Military Studies”, 2020, VOL. 33, N 1:

[34] Տես նույն տեղում:

ները, ինչն արտացոլում է բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցնելիս ցամաքային զորքերի ներկայացուցիչների նախապատվելիությունը Զինված ուժերի այլ տեսակների նկատմամբ: Այնուամենայնիվ ԳՇ-ն մատնանշում է գերակայությունները և ծախսերը՝ համապատասխանեցնելով ՌԴ ռազմավարությանը և օպերատիվ կարիքներին. երբեմն ցամաքային զորքերին տրվում է նվազ կարևորություն: ԳՇ-ն խրախուսում է զորատեսակների միջտեսակային մրցակցությունը և զսպում դրանց միջև հակասությունները: Դա անելու ձևերից մեկն է գնումների և արդիականացման այլ միջոցների վերաբերյալ ռազմավարությանը համապատասխան առաջարկություններ անելը[35]:

Եզրակացություն

Չնայած ոչ սպառիչ և մասնակի բնույթ կրող դիտարկումներին՝ այդուհանդերձ կատարված հաստատութենական համեմատությունները հնարավորություն են տալիս անելու մի քանի հիմնավոր եզրակացություններ:

Նախ. գործնականում ռուսաստանյան և ամերիկյան ռազմական ոլորտում կառավարումն ունի տարբեր ձևեր: ՇՊՄԿ նախագահը չունի հրամանատարական լիազորություններ, ինչը միտումնավոր է և արտացոլում է Միացյալ Նահանգների մշտական անհոժարությունը մեկ անձին տալու չափազանց մեծ ռազմական լիազորություններ և այն մտահոգությունը, որ ռազմական պահանջներն ու նկատառումները կարող են գերակշռել քաղաքական հրամայականները[36], ինչը, ըստ մեր ուսումնասիրության, կարծես թե առանձնապես չի մտահոգում Ռուսաստանին:

Երկրորդ. կարծես չկա ճիշտ (կատարյալ) մոդել այն առումով, որ արդյոք լավագույնն են ռազմական հրամանատարական իշխանության կենտրոնացումը կամ ապակենտրոնացումը, թե ոչ: Յուրաքանչյուր մոդել ունի իր որոշակի առավելություններն ու թերությունները: Յուրաքանչյուրի հարաբերական օգտակարությունը, ըստ երևույթին, պայմանավորված է պատերազմի այն տեսակով, որի համար նախատեսված է, ինչպես նաև այն սուբյեկտիվ նկատառումներով, որոնք վերաբերում են կառավարման համար որոշումների կայացման արագության կարևորությանը կամ լայն, բայց մակերեսային փորձի և խոր, բայց նեղ մասնագիտացման առավելությանը:

---

[35] Տես *Dmitry Gorenburg.* “Russia’s Military Modernization Plans: 2018–2027”. PONARS Eurasia Policy Memo No. 495, November 2017 (https://ponarseurasia.org/wp-content/uploads/attachments/Pepm495_Gorenburg_Nov2017-1.pdf):

[36] Տես *Ստիվեն Լ. Ռեարդեն,* Նշ. աշխ., էջ 2:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ВОЕННОГО УПРАВЛЕНИЯ В РФ И США

А. В. АЙРАПЕТЯН, полковник, кандидат военных наук, доцент, начальник Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА

РЕЗЮМЕ

Военное управление является важнейшим элементом обеспечения обороноспособности любого государства, особая отрасль его государственного управления. Военное управление включает строительство вооруженных сил, обеспечение и поддержание их необходимого уровня, организацию, планирование, контроль и координацию действий войск для достижения стратегических целей. Сравнительный анализ военного управления ведущих держав: Российской Федерации и Соединенных Штатов Америки – дает возможность оценить их преимущества и недостатки для предопределения путей дальнейшего развития наших Вооруженных сил. Объектами изучения военного управления выбраны Генеральный штаб (ГШ) ВС РФ и Объединённый комитет начальников штабов (ОКНШ) США.

На практике управление в российской и американской военных сферах принимает различные формы. Председатель ОКНШ, в отличие от Начальника Генштаба, не имеет командирских полномочий, что отражает присущее США постоянное нежелание предоставлять одной персоне чересчур большие военные права и полномочия, а также их озабоченность тем, чтобы военные соображения и требования не преобладали над политическими императивами, в то время как, в соответствии с нашим исследованием, данное обстоятельство, похоже, не особенно беспокоит Россию.

Наши оценки свидетельствуют о том, что нет идеальной модели управления в плане превосходства одного из принципов – централизованности или децентрализованности власти военного командования. Каждая модель имеет свои определённые преимущества и недостатки. Относительная полезность каждой из них обусловлена тем видом войны, для которой она предназначена (военные действия для непосредственной защиты своей территории или в отдалённых регионах), а также теми субъективными соображениями, которые касаются важности скорости принятия управленческих решений или преимущества широкого, но поверхностного опыта и глубокой, но узкой специализации.

COMPARATIVE ANALYSIS OF MILITARY MANAGEMENT IN THE RF AND THE USA

A. V. HAYRAPETYAN, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor, Head, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

SUMMARY

Military management is the most important element of ensuring any state's defense capability, and a special branch of its public administration. Military management includes building the armed forces, ensuring and maintaining them at the required level, organizing, planning, controlling and coordinating the actions of troops in order to achieve strategic goals. A comparative analysis of the military management of the leading powers, the Russian Federation and the United States of America, provides the opportunity to evaluate their advantages and disadvantages to predesignate the ways of further development of our Armed Forces. The objects of study of military management are General Staff (GS) of the RF Armed Forces and the US Joint Chiefs of Staff (JCS).

In practice, the management in the Russian and US military spheres takes different forms. The Chairman of the Joint Chiefs of Staff, unlike the Chief of the General Staff, is not endowed with command authority, reflecting the United States' longstanding reluctance to grant excessive military rights and authorities to one person, as well as its concern that military considerations and demands should not outbalance political imperatives, whereas, judging by our research, this very consequence does not appear to be a particular concern for Russia.

Consistent with our assessments of the above, we can derive that there is no ideal model of management in terms of the superiority of one of the principles – the centralization or the decentralization of military command authority. Each model has its own specific advantages and disadvantages. The relative usefulness of each is determined by the type of warfare for which it is intended (military actions in the immediate defense of one's home territory or in remote regions), as well as by subjective considerations concerning the importance of how fast the decision-making is done in management, or the advantages of broad but superficial experience, and deep but narrow specialization.